ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.11.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/183

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ
Մասնակից՝ «Մռավ Պրինտ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀԱԱՀ-ԳՀԾՁԲ-19/51» ծածկագրով գնանշման հարցում, տպագրական ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 30.10.2019թ.-ի թիվ 26/26-1/17832-2019 գրությամբ «Մռավ Պրինտ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 29.10.2019թ.-ի թիվ Ե/ՎՈՒ/1183-19 գրության հիման վրա, 30.10.2019թ.-ին «Մռավ Պրինտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 30.10.2019թ.-ին, իսկ 31.10.2019թ.-ին կայացված որոշմամբ գործը ընդունվել է վարույթ: 06.11.2019թ.-ին ու 14.11.2019թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 14.11.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 29.11.2019թ.-ին:

2. <u>«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամը 29.10.2019թ.-ի թիվ Ե/ՎՈՒ/1183-19 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնելով հետրյալը.

««Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կողմից կազմակերպված ՀԱԱՀ-ԳՀԾՁԲ-19/51 ծածկագրով գնման ընթացակարգի մասնակցին՝ «Մռավ Պրինտ» ՍՊԸ-ին, առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 41-րդ կետով, առաջարկվել է շտկել հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում «Մռավ Պրինտ» ՍՊԸ-ի հայտում արձանագրված անհամապատասխանությունները, սակայն «Մռավ Պրինտ» ՍՊԸ-ի կողմից փաստաթղթեր չեն ներկայացվել:»:

Միևնույն ժամանակ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը, Պատվիրատուն ներկայացրել է թիվ «ՀԱԱՀ-ԳՀԾՁԲ-19/51» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Մռավ Պրինտ» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք կցվել են ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված գրությանը:

3. <u>«Մռավ Պրինտ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 31.10.2019թ.-ին գրությամբ դիմել է «Մռավ Պրինտ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.10.2019թ.-ի թիվ 26/26-1/17832-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում, առարկություններ կամ կարծիք՝ չներկայանալով նաև հրավիրված նիստին:

4. <u>ՍՑ-LO-2019/183 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից տպագրական ծառայությունների ձեռքբերման նպատակով 01.10.2019թ.-ին հայտարարվել է «ՀԱԱՀ-ԳՀԾՁԲ-19/51» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Մռավ Պրինտ» ՍՊԸ-ն:

«Մռավ Պրինտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված թիվ 1, թիվ 2, թիվ 2.1, թիվ 3, թիվ 4 և թիվ 4.1 հավելվածներով ներկայացված փաստաթղթերում որպես ղեկավարի պաշտոն, անուն ազգանուն նշվել է՝ «Ռուզաննա Առաքելյան» անունը, իսկ վերը նշված փաստաթղթերը ստորագրվել է «Արման Ասմանգուլյան»-ի կողմից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 21.10.2019թ.-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ մասնակիցները հայտերը կազմել և ներկայացրել են «ՀԱԱՀ-ԳՀԾՁԲ-19/51» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան, բացառությամբ «Մռավ Պրինտ» ՍՊԸ-ի: Մասնակցի հայտում բացակայում է առկա փաստաթղթերը ստորագրողի ստորագրելու լիազորություն վերապահված լինելու մասին փաստաթուղթը…:

Հանձնաժողովը որոշել է կասեցնել նիստը և Մասնակցին ծունեցել անհամապատասխանության շտկման վերաբերյալ:

Նույն արձանագրության համաձայն՝ սահմանված ժամկետում «Մռավ Պրինտ» ՍՊԸ-ն չի շտկել արձանագրված անհամապատասխանությունը: Հանձնաժողովը որոշել է Մասնակցի հայտը գնահատել անբավարար և մերժել:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.10.2019թ.-ի թիվ 26/26-1/17832-2019 գրությամբ «Մռավ Պրինտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ լիազորագիր է համարվում գրավոր լիազորությունը, որն անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար: Ներկայացվողը ներկայացուցչի կողմից գործարքներ կնքելու համար գրավոր լիազորություն կարող է անմիջականորեն տալ համապատասխան երրորդ անձին:

Նույն հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ իրավաբանական անձի անունից լիազորագիրը տրվում է նրա ղեկավարի կամ դրա համար նրա կանոնադրությամբ լիազորված մեկ այլ անձի ստորագրությամբ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը չի կարող նույն ընթացակարգին ներկայացնել մեկից ավելի հայտ: Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ... հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը կամ դրանց մի մասը ներկայացված են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով և հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխՄռավ Պրինտնքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

«ՀԱԱՀ-ԳՀԾՁԲ-19/51» ծածկագրով ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 4.4 կետի համաձայն՝ սույն հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ նաև՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Հրավերի 7.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են

անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը կամ դրանց մի մասը ներկայացված են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով և հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխՄռավ Պրինտնքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 7.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 7.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ հայտը ստորագրելու լիազորությունը հաստատող փաստաթուղթը՝ լիազորագիրը, հանդիսանում է հայտում ներառվող փաստաթուղթ, որը ներկայացվում է հայտը ստորագրելու պատշաճ լիազորությունը հավաստելու համար: Մասնակիցը գնման ընթացակարգին մասնակցելու դեպքում պետք է ներկայացնի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր, որոնց առկայության (համապատասխանության) դեպքում է հնարավոր հայտը գնահատել հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող, հակառակ դեպքում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունը չշտկելու դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կողմից տպագրական ծառայությունների ձեռքբերման նպատակով 01.10.2019թ.-ին հայտարարված «ՀԱԱՀ-ԳՀԾՁԲ-19/51» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած «Մռավ Պրինտ» ՍՊԸ-ի կողմից թիվ 1, թիվ 2, թիվ 2.1, թիվ 3, թիվ 4 և

թիվ 4.1 հավելվածներով ներկայացված փաստաթղթերում որպես ղեկավարի պաշտոն, անուն ազգանուն նշվել է՝ «Ռուզաննա Առաքելյան» անունը, իսկ վերը նշված փաստաթղթերը ստորագրվել է «Արման Ասմանգուլյան»-ի կողմից:

Հանձնաժողովի 21.10.2019թ.-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ մասնակիցները հայտերը կազմել և ներկայացրել են «ՀԱԱՀ-ԳՀԾՁԲ-19/51» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան, բացառությամբ «Մռավ Պրինտ» ՍՊԸ-ի: Վերջինիս հայտում բացակայում է առկա փաստաթղթերը ստորագրողի ստորագրելու լիազորություն վերապահված լինելու մասին փաստաթուղթը…: Հանձնաժողովը որոշել է կասեցնել նիստը և Մասնակցին ծունեցել անհամապատասխանության շտկման վերաբերյալ: Սակայն «Մռավ Պրինտ» ՍՊԸ-ն չի շտկել արձանագրված անհամապատասխանությունը: Հանձնաժողովը որոշել է Մասնակցի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կողմից հայտարարված «ՀԱԱՀ-ԳՀԾՁԲ-19/51» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած «Մռավ Պրինտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի բոլոր հավելվածներով ներկայացված փաստաթղթերում որպես ղեկավարի պաշտոն, անուն ազգանուն նշվել է՝ «Ռուզաննա Առաքելյան» անունը, իսկ վերը նշված փաստաթղթերը ստորագրվել է «Արման Ասմանգուլյան»-ի կողմից:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ չշտկելով հայտում առկա արձանագրված անհամապատասխանությունները, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Նշվածով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ մասնակիցը պետք է ընդգրկվի գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.10.2019թ.-ի թիվ 26/26-1/17832-2019 գրությամբ «Մռավ Պրինտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2019/183 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Մռավ Պրինտ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ